Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքացի Պետրոս Սիմոնի Ավետիսյանի կողմից լիազորված անձ Հասմիկ Հասմիկ Ավետիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2017 թվականի օգոստոսի 16-ին-ին N 11567 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Պետրոս Սիմոնի Ավետիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել իր անվամբ սեփականաշնորհված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի N 73/14 հասցեի նախկին «Գյումրի Պ/Բ և կարտոֆիլի առևտրի միավորում» ՊՁ-ի թիվ 42 տաղավարի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 109.17 (մեկ հարյուր ինն ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 208951 (երկու հարյուր ութ հազար ինը հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Պետրոս Սիմոնի Ավետիսյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Պետրոս Սիմոնի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 07 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3068 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱԼԲԵՐՏ ԲԵԼՅԱՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 10-րդ մասով, Աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ալբերտ Բելյասի Մարգարյանի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Ալբերտ Բելյասի Մարգարյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ 2023 թվականի դեկտեմբերի 12-ից:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալբերտ Բելյասի Մարգարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» դեկտեմբերի 2023 թվականի N 3067 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 2927-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 22-ի <<Քաղաքացիներ Եղսիկ Միխայելի Կիրակոսյանին և Միքայել Գրիգորի Սիմոնյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N 161 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 140,25 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 16,14 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 15,56 քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ կառուցված շինությունների կարգավիճակի մասին>> N 2927-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 30/11/2023 թվականի N Կ-30112023-08-0192):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 22-ի <<Քաղաքացիներ Եղսիկ Միխայելի Կիրակոսյանին և Միքայել Գրիգորի Սիմոնյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N 161 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 140,25 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 16,14 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 15,56 քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ կառուցված շինությունների կարգավիճակի մասին>> N 2927-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին և 2-րդ կետերում <<Կիրակոսյանին>> բառից հետո լրացնել (24/25մաս), Սիմոնյանին բառից հետո լրացնել (1/25 մաս)>> բառերը և թվերը:

07.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» դեկտեմբերի 2023 թվականի N3066 Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԱԶԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ՄՆԱՑԱԿԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ԱՐՓԻՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ԱՐԹՈՒՐ ԻՍԱՀԱԿԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ (2/8 ՄԱՍ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ 8-ՐԴ ՇԱՐՔ N 26 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 85,16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Էլեկտրոտեխնիկական 8-րդ շարք N 26 հասցեով բնակելի ֆոնդի տունը պատկանում է քաղաքացիներ Նազիկ Սուրենի Իսրայելյանին, Մնացական Ռոբերտի Իսրայելյանին, Արփինե Մնացականի Իսրայելյանին, Դիանա Մնացականի Իսրայելյանին, Արթուր Իսահակի Թումասյանին, Արսեն Իսահակի Թումասյանին և Անահիտ Սարգսի Թումասյանին (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրվ. 2023 թվականի հուլիսի 28-ին N 4653 և Գյումրու քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 28-ի N 524 որոշում):

Քաղաքացի Անահիտ Թումասյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար , փաստացի զբաղեցրած 85,16 (ութսունհինգ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի N 524 որոշում տրվ. 28.07.1997թ.) ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով , ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Թումասյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 13-ին N 19287 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Նազիկ Սուրենի Իսրայելյանին (1/8 մաս), Մնացական Ռոբերտի Իսրայելյանին (1/8 մաս), Արփինե Մնացականի Իսրայելյանին (1/8 մաս), Դիանա Մնացականի Իսրայելյանին (1/8 մաս), Արթուր Իսահակի Թումասյանին (1/8 մաս) և Անահիտ Սարգսի Թումասյանին (2/8 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականություն իրավունքով իրենց պատկանող Էլեկտրոտեխնիկական 8-րդ շարք N 26 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 85,16(ութսունհինգ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը որպես սեփականություն՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 378280(երեք հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ :
3. Սահմանված կարգով կնքել հողի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին) :

4. Հողի առքուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Նազիկ,Մնացական,Արփինե,Դիանա Իսրայելյանների և Արթուր ,Արսեն, Անահիտ Թումասյանների միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Նազիկ,Մնացական,Արփինե,Դիանա Իսրայելյաններին և Արթուր, Արսեն, Անահիտ Թումասյաններին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

07.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՇԱ ՍԵՐԳՈՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«06»«դեկտեմբերի» 2023 թվական N 3065 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 06-ին ժամը 11:15-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Միշա Սերգոյի Հակոբյանի (հասցե՝ ք.Գյումրի, Սունդուկյան փ., 189 շենք) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Միշա Սերգոյի Հակոբյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2010-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ AE 0354583 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 724741111774110643 տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 26.06.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 23.758 (քսաներեք հազար յոթ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի ՝ Միշա Սերգոյի Հակոբյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 23.758 (քսաներեք հազար յոթ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Միշա Սերգոյի Հակոբյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Միշա Սերգոյի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

06.12.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2023 թվականի N 3064-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ (ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆԻ ԱՎԱՆ) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 18.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սամվել Գուրգենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականության վկայագիր N 261) Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2-րդ թաղամասում գտնվող բնակելի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 18.47 (տասնութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ, 2 (երկու) պատուհան, ինքնակամ պատուհանի է ձևափոխված 1 (մեկ) դուռ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023BUWBFW ծածկագրով:

Քաղաքացի Սամվել Գուրգենի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Գուրգենի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 30-ին N 23351 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սամվել Գուրգենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2-րդ թաղամասում գտնվող բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 18.47 (տասնութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը, 2 (երկու) պատուհանը, ինքնակամ պատուհանի ձևափոխված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5688 (հինգ հազար վեց հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամվել Գուրգենի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2023 թվականի N 3063-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ ՓՈՂՈՑԻ N 22 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 255.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23102023-08-0030 վկայական) Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 22 հասցեի տան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 4.3 (չորս ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, իսկ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 250.76 (երկու հարյուր հիսուն ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023CLLGY4 ծածկագրով:

Քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 10-ին N 24259 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 250.76 (երկու հարյուր հիսուն ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 4.3 (չորս ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 8467 (ութ հազար չորս հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աննա Անդրանիկի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.12.2023

x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2023 թվականի N 3062-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 28/5 ՏԱՆԸ ԿԻՑ 41,05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 9,22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 28/5 տանը կից 41,05 (քառասունմեկ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 9,22 (ինը ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպ, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Վանիկ և Ռիտա Մխիթարյանները

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվերով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023 A6FWVK ծածկագրով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 28/5 տանը կից 41,05 (քառասունմեկ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 9,22 (ինը ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Վանիկ և Ռիտա Մխիթարյաններին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2023 թվականի №3061-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՂՈՑ 8-ՐԴ ՇԱՐՔ 26 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 93,33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 37,17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի №2624–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի էլեկտրոտեխնիկական փողոց 8-րդ շարք 26 հասցեի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 93,33 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 37,17 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թ. Մանդալյան փողոց, 24 շինություն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2023 թվականի №3060-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի №2980-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի «Գյումրի քաղաք, Սպանդարյան փողոց, 26/7 (վկայական №14092023-08-0012), Սպանդարյան փողոց, 32/2 (վկայական №13012020-08-0044) և Հ. Կիրակոսյան փողոց, 26/9 (վկայական №16122022-08-0020) հասցեագրությամբ անշարժ գույքերի միավորման նպատակով նոր հասցե տրամադրելու մասին» №2980-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. վերնագրում և որոշման կայացման մեջ

«Գյումրի քաղաք, Սպանդարյան փողոց, 26/7 (վկայական №14092023-08-0012), Սպանդարյան փողոց, 32/2 (վկայական №13012020-08-0044) և Հ. Կիրակոսյան փողոց, 26/9 (վկայական №16122022-08-0020) հասցեագրությամբ անշարժ գույքերի» բառերը և թվերը փոխարինել «Գյումրի քաղաք, Սպանդարյան փողոց, 26/7 (վկայական №14092023-08-0012), Սպանդարյան փողոց, 32/2 (վկայական №13012020-08-0044), Սպանդարյան փողոց, 32/1 (վկայական №2836653) և Հ. Կիրակոսյան փողոց, 26/9 (վկայական №16122022-08-0020) հասցեագրությամբ անշարժ գույքերի» բառերով և թվերով:

06.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3059-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 33/14 ՀԱՍՑԵԻ 33.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 33/14 հասցեի 33.4 (երեսուներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 33/14 հասցեի 33.4 (երեսուներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

06.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2023 թվականի N3058-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 216.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 84.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (62.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 216.32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 84.55 (ութսունչորս ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (62.08 (վաթսուներկու ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023HLTR53 ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 216.32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 84.55 (ութսունչորս ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (62.08 (վաթսուներկու ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Թամարա Հենրիկի Կարապետյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2023 թվականի N 3057Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 633.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 129.58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (112.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 633.22 (վեց հարյուր երեսուներեք ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 129.58 (հարյուր քսանինն ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (112.8 (հարյուր տասներկու ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023XG4CNL ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 633.22 (վեց հարյուր երեսուներեք ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 129.58 (հարյուր քսանինն ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (112.8 (հարյուր տասներկու ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Նելլի Ղազարի Հալաջյանին և Արմանուշ Կամոյի Քերոբյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 05 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3056 -Ա

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ << ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Արտաշես Խաչատուրի Երանոսյանի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արտաշես Խաչատուրի Երանոսյանին (ծնված՝ 1995 թվականի հուլիսի 23-ին, նույնականացման քարտ՝ N 010560019, տրված՝ 2018 թվականի օգոստոսի 15-ին՝ ՀՀ ոստիկանության 064-ի կողմից, հաշվառման հասցե՝ քաղաք Գյումրի, Բելինսկի 34, հանրային ծառայությունների համարանիշ՝ 3307950460) 2023 թվականի դեկտեմբերի 6-ից նշանակել << ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտաշես Խաչատուրի Երանոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 05 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3055 -Ա

ԷԴՈՒԱՐԴ ԼԵՆԴՐՈՇԱՅԻ ԱԼԱԳՅՈԶՅԱՆԻՆ << ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ուսմասվար Էդուարդ Լենդրոշայի Ալագյոզյանին ազատել կազմակերպության տնօրենի աշխատանքային պարտականությունների կատարումից՝ 2023 թվականի դեկտեմբերի 6-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Լենդրոշայի Ալագյոզյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 05 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3054 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳԻԻ ՁԱՄՈՒԿԱՇՎԻԼԻԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Անի փողային նվագախումբ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 14 աշխատանքային օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ից 30-ը ներառյալ:

3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դիրիժոր Արտակ Արտուշի Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին և Արտակ Արտուշի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» դեկտեմբերի 2023 թվականի N 3053Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 261.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 70.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (56.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Օդանավակայանի թաղամասում ինքնակամ զբաղեցրած 261.9 (երկու հարյուր վաթսունմեկ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 70.95 (յոթանասուն ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (56.4 (հիսունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023SEKWMP ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Օդանավակայանի թաղամասում ինքնակամ զբաղեցրած 261.9 (երկու հարյուր վաթսունմեկ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 70.95 (յոթանասուն ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (56.4 (հիսունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Ալլա Ռոբերտի Ավետիսյանին, Միլենա Գագիկի Մուրադյանին և Լիանա Գագիկի Մուրադյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. դ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» դեկտեմբերի 2023 թվականի N 3052Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 2958-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նեկրասովի փողոցի N 5/1 հասցեի 41.98 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին N 2958-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նեկրասովի փողոցի N 5/1 հասցեի 41.98 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2958-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Նախաբանի 1-ին պարբերությունում «Թումանյան փողոցի N 53/1 հասցեի 55.49 (հիսունհինգ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Լուսինե Սաշայի Հովսեփյանին և Արայիկ Մուկուչի Հովսեփյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27112013-08-0009 վկայական)» թվերը և բառերը փոխարինել «Նեկրասովի փողոցի N 5 հասցեի 59.0 (հիսունինը) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Աղվան Գեորգիի Հարությունյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10112022-08-0036 վկայական)» թվերով և բառերով:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3051 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինություններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինություններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Նախաբանի 3-րդ պարբերությունում «կետի» բառից հետո լրացնել «, և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող N 2023MCPGXT տեղեկանքը» թիվը և բառերը:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի